**ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

Երևան, Կառավարական տուն 3

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ N 323**

**Համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գրանցված անձանց ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը տեղեկացնում է ժամանակավոր թափուր պաշտոնի վերաբերյալ**

**Երևանի Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի ֆինանսական բաժնի առաջատար մասնագետ**
**(3.1-195)**

ա) մասնակցում է վարչական շրջանի մասով մուտքերի և ծախսերի կանխատեսման աշխատանքների ամփոփմանը.
բ) իրականացնում է վարչական շրջանի մասով ամրագրված եկամուտների կատարման վերլուծություն.
գ) իրականացնում է քաղաքապետարան ներկայացված վճարման հայտերի և տրված ֆինանսավորումների հաշվառում.
դ) իրականացնում է բաժնի փաստաթղթաշրջանառության նկատմամբ հսկողությունը և արդյունքերը պարբերաբար ներկայացնում բաժնի պետի.
ե) կատարում է վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմում ներդրված եկամուտների և ծախսերի կատարման համակարգչային ծրագրի օպերատորի պարտականությունները.
զ) կատարում է բաժնի պետի հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ որակով.
է) բաժնի պետի հանձնարարությամբ ապահովում է բաժնի փաստաթղթային շրջանառությունը և լրացնում համապատասխան փաստաթղթերը.
ը) հետևում է բաժնի պետի հանձնարարականների, համապատասխան ժամկետներում, կատարման ընթացքին, որոնց արդյունքների մասին զեկուցում է բաժնի պետին.
թ) իր լիազորությունների սահմաններում, անհրաժեշտության դեպքում, նախապատրաստում և բաժնի պետին է ներկայացնում է իր աշխատանքային ծրագրերը, ինչպես նաև առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.
ժ) բաժնի պետի հանձնարարությամբ իրականացնում է քաղաքացիների հերթագրում՝ բաժնի պետի մոտ ընդունելության համար.
ի) բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին.
լ) բաժնի պետի հանձնարարությամբ ուսումնասիրում է դիմումներում և բողոքներում բարձրացված հարցերը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում նախապատրաստում պատասխան.

**Նշված ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝**

ա) ունի առնվազն միջնակարգ կրթություն.
բ) ունի <<Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին>>. <<Համայնքային ծառայության մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<ՀՀ բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
գ) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.
դ) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

**Տվյալ ժամանակավոր թափուր պաշտոնի առաջացման հիմքի վերացման ժամկետն է՝ մինչև 2021 թվականի հունվարի 18-ը (հղիության և ծննդաբերության արձակուրդ) կողմից զբաղեցնելը: Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 2020 թվականի սեպտեմբերի 18-ը ժամը 10:00: Խնդրում ենք դիմումներն ուղարկել միայն էլեկտրոնային տարբերակով՝ e-request.am էլեկտրոնային հասցեին: Համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գրանցված անձինք լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են դիմել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմ (ք.Երևան, Կառավարական տուն N 3, հեռ. 010-515-132): ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:**

**ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն**